սովորաբար եղել է։ «Արարատ»ի էջերը բաց են, ինչպէս տեսնում էք, հեռու մնալիկ ամէն եկեղեցականի եւ Հայ. եկեղեցոյ ամէն մի սրտացաւ զաւակի ու բարեկամի համար. իվ գրիչ ունի՝ թող շարժէ եւ օգնէ, նորան իրեն վայել բարձրութեան վերայ դնելու եւ իւր կոչման արժանի գործ կատարել տալու։

Կ. վ.

## ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Նոյեմբեր 16-ին Նորին Սրբութիւն Վ.Եհ. Հայրապետը մեկնեց Մայր Աթոռից դէպի Երեւան և երկու օր մնալով այնտեղ՝ 18-ին երկաթուղով ուղեւորուեցաւ դէպի Աղէքսանդրապոլ։ Աջնորդարանից մինչև երկաթուղու կայարանը ուղեկցում էին Գեր. Տ. Սուքիաս Արքեպիսկոպոս, կոնսիստորիայի անդամներ և ուրիշ աղդայինք, տեղւոյն ոստիկանապետը և ձիաւոր ոստիկաններ։ Երեկոյեան ժամը 7-ին գնացքը հասաւ Աղէքսանդրապոլ, ուր կայարանում դիմաւորեցին Վ.Եհ. Հայրապետին տեղական գաւառապետը, քաղաքագլուխը, փոխանորդ Տ. Տիրայր վարդապետ, քահանաներ և ժողովրդի ստուար բազմութիւն։

Նորին սրբութիւնն երկու օր հանգստանալով Աղէքսանդրապոլում՝ 22-ին ցերեկուայ գնացքով մեկնեց դէպի Տփխիս։ Ղարաքիլիսայ կայարանում Նորին Սրբութեան դիմաւորեցին Տփխիսի Կոնսիստորիայի նախանդամ Տ. Արսէն վարդապետ, տեղական քահանաներ և ժողովրդի պատուաւոր անդամներ։ Նորին Սրբութեան ուղեկցում էին Տ. Կիւրեղ և Տ. Կորիւն վարդապետները։ Տփխիսի կայարանում Նորին Սրբութեան

դիմաւորեցին Գեր. Տ. Բարդուղիմէոս եպս., Տ. Մամբրէ, Տ. Յովհաննէս և Տ. Դիոնէսիոս վարդապետներ, աւագ քահանաներ, Ներսիսեան դպրանոցի Հոգաբարձութեան անդամներ և ժողովրդից բաւական մեծ բազմութիւն։ Օրը տարաժամանց լինելուն համար՝ Վ.Հ. Հայրապետը չկամեցաւ թափորով և Հրաշափառով մուտք գործել Մայր եկեղեցին, այլ ուղղակի բարձրացաւ առաջնորդարան հանդստանալու։

Նոյն ամսի 26-ին Նորին Սրբութիւնն այցելեց Կովկասի կառավարչապետ Իշխան Գ. Ս. Գալիցինին և մօտ մի ժամի չափ տեսակցեցաւ. թարգմանն էր Կովկասեան դրաքննական ժողովի անդամ պ. Ա. Յ. Քիշմիշեանց։ Նոյն ամսի 26-ին Տ. Կառավարչապետը փոխ այցելութեան եկաւ Նորին Սրբութիւն Վ.Հ. Հայրապետի մօտ և մնաց $5|_4$ ժամ։

Նորին սրբութեան Տփխիս եղած ժամանակ վախճանուեց Շուշեցի յայտնի մեծատուն բարեգործ պ. Աւետիք Բալայեան Ղուկասեանց, որ վայելում էր Նորին Սրբութեան առանձին համակրանքը, որի թաղման հանդիսին և վանքի աւագ եկեղեցում նախագահեց Վ.Հ. Հայրապետը՝ արտօնելով թաղել հանգուցեալին վանքի գաւթում իւր ծախքով կառուցուած եկեղեց. պատմական թանգարանի ներքև դամբարանի մէջ։ Հանգուցեալ Ա. Ղուկասեան կտակել է 60000 բուբլի Մայր Աթոռին, որի տոկոսներով պէտք է բարձրագոյն կրթութիւն ստանան ս. Էջմիածնի Հոգ. Ճեմարան աւարտող սաները, և նոցա ընտրութիւնը պէտք է լինի Վ.Հ. Հայրապետի բարեհաճ կամքով և վարչութեան ցուցմամբ։ Բացի այդ հանգուցեալը թողել է ի տրամադրութիւն Նորին Սրբութեան Վ.Հ. Հայրապետին 5000 բուբլի, նոյնպէս և 6000 բուբլի իւր ծխատէր Գիւտ ա. քահ. Աղանեանցին, աչքի ընկնող գումարներ իւր հիմնարկած թանգարանի օգտին, Վանքի եկեղեցու քահանաներին, չքաւոր օրիորդների օգտին և էլն։ Ապահովել է նաև Ղուկասեան մրցանակի բաշխումը, որի համար հայ դրագէտներ պիտի ներկայացնեն իրենց երկասիրութիւնները ամէն տարի ապրիլ 7-ին, Աւետման տօնի օրը։ Թաղման օրը Մայր տաճարում էս պատարագ և հոգեհանգիստ կատարեցին Վ.Հ. Հայրապետի հե-

ռապրական հրամանի համաձայն։

Նորին Սրբութիւնը բարեհաճեց մեկնել Տփխիսից դէպի Մայր Աթոռ դեկտ. 13-ին ցերեկուայ գնացքով։ Հասնելով զիշերուայ ժամը 10-ին Աղէքսանդրապոլ՝ երկու օր հանգստացաւ և 16-ին ողջամբ ժամանեց ի Մայր Աթոռ։

---

Դեկտ. 22-ին, կիւրակէ պատարագից յետոյ, Մայր տաճարում հոգեհանգիստ կատարուեց Խաչակ Ժամհարեանի համար, որի աղէտալի մահուան լուրը հասել էր հեռագրով։ Տ. Կարապետ վարդապետ մի քանի խօսքով թուեց այն բարեգործութիւնները, որոնցով յայտնի են դարձել Ժամհարեան եղբայրները՝ նոցա և մասնաւորապէս հանգուցեալի մի շարք բարեմասնութիւնները։

---

Գեր. Տ. Գէորգ արքեպս. Սուրէնեան, որ անցեալ տարուանից Վ.Հ. Հայրապետի հրամանաւ Մայր Աթոռ հրաւիրուած էր աւելի կարևոր պաշտօնի համար, Նորին Սրբութեան սրբատառ կոնդակով վերստին կոչուեցաւ ստանձնելու իւր առաջնորդական պաշտօնը Տփխիսում։

Դեկտ. 24-ին իրրև Նորին Բարձր սրբազնութեան հրաւիրակ եկան Մայր Աթոռ Տ. Դիոնէսիոս և Տ. Յովհաննէս վարդապետներ և Տ. Սարգիս քահ. Շիրոյեան. 25-ին երեկոյեան Տփխիսի երեցփոխանների կողմից նշանակուած պ. Ս. Բուզդանեան՝ Վանքի եկեղեցւոյ, և ինժինէր պ. Ն. Գրիգորեան՝ Կուկիոյ Նորաշէն եկեղեցւոյ երեցփոխան։ Նոյնպէս և կոնսիստ.-ի կողմից նշանակուած երկու աւագ քահանաներ՝ Տ. Ղ. Խաչատրեան և Տ. Գիւտ Աղանեան։ Վերջինս հանդիպեց Արաքս կայարանում։ Դեկտ. 26 առաւօտեան ժամը 10-ին Նորին Սրբութիւն Վ.Հ. Հայրապետն ընդունեց Գեր. Տ. Գէորգ արքեպիսկոպոսի վերջին հրաժեշտը. ապա վեհարանում տուեց նախաճաշ Նորին Բարձր Սրբազնութեան և Տփխիսից եկած պատգամաւորներին, որոնց և ընկերացան Մայր Աթոռի միաբաններից մի քանիսը։ Վանքի Մեծ դուռն մօտ ժո-

զովուած միաբանակիցներին իւր հրաժեշտի ողջոյնը տալուց յետոյ՝ Դեր. Տ. Գէորգ Սրբազան մեկնեց դէպի երկաթուղւոյ կայարան, մինչև ուր ընկերացան Դեր. Յուսիկ եպս., Տ. Համազասպ, Տ. Աշոտ և Տ. Կորիւն վարդապետներ։

---

Նուխւոյ նախկին փոխանորդ Բարեշն. Տ. Իսահակ վարդ. հրաժարական մատուցանելով՝ Նորին Սրբութեան Վեհ. Հայրապետի բարեհաճ հրամանաւ փոխադրուեցաւ նոյն պաշտօնով Հին Նախիջևան. իսկ նորա տեղ Նուխւոյ փոխանորդ նշանակուեց Նախիջևանի փոխանորդ Բարեշն. Տ. Սիոն վարդապետ։

---

Զարեբայ ս. Աստուածածին վանքի վանահայրութեան պաշտօնը թափուր մնալով, հանգուցեալ Տ. Աստուածատուր վարդապետի մահուամբ՝ նոյն վանքի վանահայր կարգուեց Ամարասի վանահայր Տ. Վահան վարդ. իսկ Ամարասում վանահայր նշանակուեց Տ. Խորէն աբ. Լազարեան, նախկին վանահայր Որոտնայ վանքի։

---

Նորին ս. Օծութեան բարեհաճ հրամանաւ ս. Սինոդի անդամ Դեր. Տ. Յուսիկ եպս. նոյեմբ. 24-ին ս. Գայիանէ վանքում կուսակրօն քահանայ ձեռնադրեց Մայր Աթոռի միաբան Ղազար և Եսայի սարկաւագներին, վերակոչելով առաջնոյն Արտակ և երկրորդին Զաւէն. նորընծաները նոյն օր երեկոյեան ստացան աբեղայութեան կարգը և վեղար։

---

Տփխիսի ս. Սարգիս վանուց վանահայր և Մայր Աթոռի կալուածոց կառավարիչ Տ. Մամբրէ վարդապետ Հայրապետական հրամանաւ կանչուեց ի Մայր Աթոռ ուրիշ պաշտօնի համար. իսկ նորա տեղ նոյն պաշտօններում նշանակուեց Տ. Արսէն վարդ., որ պիտի վարէ նաև Տփխիսի Կոնսիստորիայի նախանդամութեան պաշտօնը։

Դեկտ. ամսին պաշտօնական գործերով Մայր Աթոռ եկան Կարսի և Աղէքսանդրապոլի փոխանորդները՝ Տ. Կիւրեղ և Տ. Տիրայր վարդապետները, և կրկին վերադարձան իրենց պաշտօնատեղին։

Կարիւն վարդապետ.

---

Մ. Աթոռի միաբան Տ. Մեսրոպ վարդապետ դեկտեմբեր 15-ին յաջողութեամբ պաշտպանելով իւր շարադրութիւնը Պետերբուրգի համալսարանի ուսումնական կաճառի առաջ՝ ստացաւ մագիստրոսի աստիճանը։ Նորա շարադրութեան վերնագիրն է „История перевода Библіи на армянскій языкъ“ (Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան պատմութիւնը), որի մասին խօսելով և թուելով Հ. Մեսրոպի միւս ուսումնական աշխատութիւնները՝ գլխաւոր քննադատը, Պրոֆ. Մարր, թէպէտ մատնանիշ է արել մի քանի թերութիւնների վերայ, բայց իբրև մի ըստ ամենայնի լուրջ աշխատութիւն է նկատել և ըստ այնմ հեղինակին արժանի դտել յիշեալ գիտական աստիճանին։

---

Ճեմարանի նախկին սան, ուսուցիչ և վերակացու Մկրտիչ Ղազարեան Կարսեցի, որ ընդունուած է Մ. Աթոռի միաբանների շարքում՝ առ ժամանակ Պետերբուրգի համալսարանի Արևել. բաժնում ուսանելուց, ապա Գերմանական համալսարաններում ուսումը շարունակելուց և աւարտելուց յետոյ՝ մեծ յաջողութեամբ քննութիւն է տուել Ստրասբուրգի համալսարանում և ստացել փիլ. դոկտորի տիտղոս (magna cum laude աստիճանով)։ Առանձնապէս պարապել է ասորերէն լեզուով և դրականութեամբ, որից և առել է իւր շարադրութեան նիւթը։ Այժմ Լայպցիգում այդ շարադրութիւնը տպագրել տալուց յետոյ՝ կշտապէ վերադառնալ ս. Էջմիածին։